ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3243-Ա « 30 » հունիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի Հ.2911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ Հ.Հ.26,75 ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՔԱՆԱԿՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 6-րդ մասով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 19.06.2026թ. հ.Ն/39212-26 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 30-ի «Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը հաստատելու մասին» հ.2911-Ա որոշման N2 հավելվածում ընդգրկված միկրոավտոբուսային հ.հ.26,75 երթուղիները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

26	ԼՈՒԿԱՇԻՆԻ ՓՈՂՈՑ - ՆՈՐ ՆՈՐՔԻ 1-ԻՆ ԶԱՆԳՎԱԾ Լուկաշինի փ. (ս.կ) - Մարտիրոսյան - Գ.Հասրաթյան - Լենինգրադյան փ.ներ- Ծիծեռնակաբերդի խճ. - Աթենքի փ. - «Հաղթանակի» կ-ջ - Արգիշտիի - Գ.Լուսավորչի - Ագաթանգեղոսի - Խանջյան - Մոսկովյան - Աբովյան - Կորյունի - Չարենցի - Հերացու - Արմենակյան - Գ.Հովսեփյան - Նորքի 2-րդ փ.-ի նրբ. - Նորքի 1-ին փ.-ի նրբ. - Գյուրջյան - Ջուղայի փ-ներ - Նոր Նորքի 1-ին զծ. (վ.կ.): Հետադարձը՝ նույնը մինչև Արմենակյան փ.- Սարալանջի նոր խճուղի - Մյասնիկյան պ. - Աբովյան պ-կ - Աբովյան - Մոսկովյան - Խանջյան փ-ներ - շարունակությունը՝ նույն ուղեգծով:	36.6	120	18.3	13	15	9/10	13/8/4 10/7/3	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն

75	ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԻ ԲԱՆԱՎԱՆ - ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՆԹԵՈՆ Էներգետիկների բանավան (ս.կ.) - Էջմիածնի խճ. - Ա.Բաբաջանյան - Զոր.Անդրանիկի - Ռաֆֆու - Սեբաստիայի - Մալաթիայի - Վարուժանի - Վանության - Կուրղինյան - Սեբաստիայի փ-ներ - Ծով.Իսակովի պող. - «Հաղթանակ» կ/ջ - Արգիշտիի - Իտալիայի - Խորենացու փ-ներ - Մաշտոցի պող. - Ամիրյան փ. - Հանրապետության հր. - Տ.Մեծի պ. - Ս.Դավթի - Ժ. Կուստոյի - Գաջեգործների - Նուբարաշենի - Նոր Արեշի 7-րդ փ-ներ - Նոր Արեշի 20-րդ նրբ. - Նոր Արեշի 9-րդ - 50-րդ - Էրեբունու - Նուբարաշենի փ.ներ - Քաղաքային պանթեոն (վ.կ): Հետադարձը՝ Նուբարաշենի - Գ.Մահարու - Նոր Արեշի 50-րդ փ-ներ - նույն ուղեգծով մինչև Մաշտոցի պող. - Խորենացու - Բեյրութի - Արգիշտիի փ-ներ- շարունակությունը նույն ուղեգծով:	42	110	22.9	13	15	8/9	13/8/4 10/7/3	Երթուղու շարժակազմի քանակի փոփոխություն

2.Հանձնարարել Երևան քաղաքի ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային հ.հ.26,75 երթուղիների համալրման աշխատանքների իրականացումը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ